Ենթակա է հրապարակման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. հունիսի 17-ի Թբիլիսի (Վրաստան) գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանունը՝

Ավագ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Թբիլիսի (Վրաստան)՝ 2019թ. հունիսի 17-ին

4. Հրավիրող կողմը՝

---

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

2019թ. հունիսի 28-ին ք. Դիլիջանում կազմակերպվող հայ-վրացական գործարար համաժողովի նախապատրաստական աշխատանքների հետ կապված հարցերի քննարկում

6. Քննարկված թեմաները՝

Թբիլիսի կայացած այցի շրջանակներում Վրաստանի մի շարք պետական կառույցների ղեկավարների հետ քննարկվել են ս.թ. հունիսի 28-ին ք. Դիլիջանում կազմակերպվող հայ-վրացական գործարար համաժողովի նախապատրաստական աշխատանքները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի տեղակալ Գենադի Արվելաձեի, Վրաստանի առևտրաարդյունաբերական պալատի (ՎԱՊ) նախագահ Նինո Չոկովանիի, ՎԱՊ-ի գլխավոր տնօրեն Գրիգոր Բայբուրդի, Վրաստանի էկոնոմիկայի և

կայուն զարգացման նախարարության ազգային զբոսաշրջության ադմինիստրացիայի ղեկավար Մարիամ Կվրիվիշվիլիի հետ կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են ծրագրված համաժողովի հետ կապված մի շարք հարցեր, մասնավորապես. համաժողովի շրջանակներում կազմակերպվող առևտրատնտեսական թեմատիկ պանելի ընթացքում քննարկվելիք հարցերը, զբոսաշրջային թեմատիկ պանելի հետ կապված՝ տարածաշրջանային միասնական զբոսաշրջային փաթեթների ձևավորմանն առնչվող հարցեր, երկու երկրների մասնավոր հատվածների համագործակցության ընդլայնման հնարավորությունները, համատեղ միջոցառումների կազմակերպման և անցկացման հեռանկարները, ինչպես նաև Վրաստանի պետական ատյանների ներկայացուցիչների՝ միջոցառման մասնակցության հնարավոր մակարդակը, գործարար հատվածների ներկայացուցիչների ոլորտային քննարկումների շրջանակները, համաժողովի կազմակերպման ձևաչափը և այլ լոգիստիկ հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Միջոցառման ընթացքում ոչ մի փաստաթուղթ չի ստորագրվել: ՀՀ էկոնոմիկայի փոխնախարարը ներկայացրել է համաժողովի կազմակերպման ուղղությամբ հայկական կողմից իրականացված աշխատանքները և այդ միջոցառման պատշաճ իրականացման նպատակով ճշգրտվել են անհրաժեշտ հետագա համատեղ քայլերն ու աշխատանքները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

2019թ. հունիսի 28-ին ք. Դիլիջանում հայ-վրացական գործարար համաժողովի պատշաճ կազմակերպում

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

24.06.2019թ.